# Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության ոլորտում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը հաստատելու մասին

**Նախագիծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**----------------------- 2020 թ. № --------- Ն**

Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության ոլորտում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը հաստատելու մասին

Հիմք ընդունելով ««Նախադպրոցական կրթության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի «Եզրափակիչ մաս և անցումային դրույթների» 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել նախադպրոցական կրթության ոլորտում համընդհանուր ներառական կրթության համակարգը ներդնելու գործողությունների պլանը և ժամանակացույցը համաձայն N 1 հավելվածի:
2. Սույնորոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված **N 1**
ՀՀ կառավարության

2020 թվականի ___________ __-ի

N _____ -Ն որոշման

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| **Հ/Հ** | **Գործողությունը** | **Ժամկետը** | **Պատ** |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. | Նախադպրոցական տարիքի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատման գործիքակազմի մշակում | 2020-2021թթ. | ՀՀ կ նախ Հանր կենտ |
| 2. | Նախադպրոցական տարիքի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության և զարգացման գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի և ձևաթղթերի մշակում (Նախադպրոցական կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ, Մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներ, Անհատական թղթապանակ, Անհատական ուսուցման և զարգացման պլան) | 2020-2021թթ. | ՀՀ կ նախ Հանր կենտ |
| 3. | Նախադպրոցական տարիքի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների վերապատրաստման մոդուլների մշակում | 2020-2021թթ. | ՀՀ կ նախ Հանր կենտ |
| 4. | Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների մասնագետների վերապատրատում՝ «Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող նախադպրոցականների գնահատում» և «Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող նախադպրոցականներին մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրում» թեմաներով | 2020-2021թթ. | ՀՀ կ նախ Հանր կենտ |
| 5. | Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզերում և Երևան քաղաքում նախադպրոցական համընդհանուր ներառական կրթությանն անցմանն ընդառաջ համընդհանուր ներառականության ներդրման վերաբերյալ իրազեկության բարձրացում (տեղեկատվական արշավների անցկացում և գործողությունների իրականացման արդյունքների լուսաբանում) | 2021-2022թթ. | ՀՀ կ նախ Հանր կենտ ՀՀ Ս Երևա |
| 6. | Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզերում և Երևան քաղաքում նախադպրոցական համընդհանուր ներառական | 2021-2022թթ. | ՀՀ կ նախ |

| | | | |
|---|---|---|---|
| | կրթությանն անցմանն ընդառաջ նախադպրոցական ուսումնական հաստատությունների և Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների մանկավարժական աշխատողների վերապատրաստում` նախադպրոցական տարիքի Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ մանկավարժական աշխատանքների կազմակերպման մեթոդաբանության հարցերի շուրջ | | Հանր<br>կենտ<br><br>ՀՀ Ս<br>Երևա |
| 7. | Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզերում և Երևան քաղաքում նախադպրոցական տարիքի Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարիքների գնահատում | 2021-2022թթ | ՀՀ կ<br>նախ<br><br>Հանր<br>կենտ<br><br>Տարա<br>աջա<br><br>ՀՀ Ս<br>Երևա |
| 8. | Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզերում և Երևան քաղաքում գործող Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի/կենտրոնների կողմից սպասարկվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների ցանկի հաստատում | 2021-2022թթ | ՀՀ կ<br>նախ<br><br>Հանր<br>կենտ<br><br>ՀՀ Ս<br>Երևա |
| 9. | Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզերում և Երևան քաղաքում գործող Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի/կենտրոնների կողմից նախադպրոցական տարիքի կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման նպատակով ֆինանսավորում | 2020-2021թթ | ՀՀ կ<br>նախ<br><br>Հանր<br>կենտ<br><br>ՀՀ Ս<br>Երևա |
| 10. | Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզերում և Երևան քաղաքում նախադպրոցական տարիքի կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառման և մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման գործընթացների մշտադիտարկում | 2021-2022թթ | ՀՀ կ<br>նախ<br><br>Հանր<br>կենտ |
| 11. | Արարատի, Կոտայքի, Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի, Արմավիրի մարզերում նախադպրոցական կրթության ոլորտում համընդհանուր ներառական կրթությանն անցմանն ընդառաջ համընդհանուր ներառականության ներդրման վերաբերյալ իրազեկության բարձրացում | 2022-2023թթ. | ՀՀ կ<br>նախ<br><br>Հանր<br>կենտ |

| | | | |
|---|---|---|---|
| | (տեղեկատվական արշավների անցկացում և գործողությունների իրականացման արդյունքների լուսաբանում) | | ՀՀ Ա<br>Արա<br>մար |
| 12. | Արարատի, Կոտայքի, Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի, Արմավիրի մարզերում նախադպրոցական համընդհանուր ներառական կրթությանն անցմանն ընդառաջ նախադպրոցական ուսումնական հաստատությունների և Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների մանկավարժական աշխատողների վերապատրաստում՝ նախադպրոցական տարիքի Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ մանկավարժական աշխատանքների կազմակերպման մեթոդաբանության հարցերի շուրջ | 2022-2023թթ. | ՀՀ կ<br>նախ<br><br>Հան<br>կեն<br><br>ՀՀ Ա<br>Արա<br>մար |
| 13. | Արարատի, Կոտայքի, Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի, Արմավիրի մարզերում նախադպրոցական տարիքի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարիքների գնահատում | 2022-2023թթ. | ՀՀ կ<br>նախ<br><br>Հան<br>կեն<br><br>Տար<br>աջա<br><br>ՀՀ Ա<br>Արա<br>մար |
| 14. | Արարատի, Կոտայքի, Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի, Արմավիրի մարզերում գործող տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի/կենտրոնների կողմից սպասարկվող նախադպրոցական ոսումնական հաստատությունների ցանկի հաստատում | 2022-2023թթ. | ՀՀ կ<br>նախ<br><br>Հան<br>կեն<br><br>ՀՀ Ա<br>Արա<br>մար |
| 15. | Արարատի, Կոտայքի, Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի, Արմավիրի մարզերում գործող Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի/կենտրոնների կողմից նախադպրոցական տարիքի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման նպատակով ֆինանսավորում | 2022-2023թթ. | ՀՀ կ<br>նախ<br><br>Հան<br>կեն<br><br>ՀՀ Ա<br>Արա<br>մար |
| 16. | Արարատի, Կոտայքի, Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի, Արմավիրի մարզերում նախադպրոցական տարիքի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառման և | 2022-2023թթ. | ՀՀ կ<br>նախ<br><br>Հան<br>կեն |

մանկավարժահոգեբանական աջակցության
տրամադրման գործընթացների մշտադիտարկում